

**«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա»
ՓԲԸ-ի գազավորված զովացուցիչ ըմպելիքների,
շշալցված ջրի և օշարակի արտադրության
վերազինման**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**

(Լրամշակված)

Ձեռնարկող՝ «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ

Տևոնի՝ Ա. Սահակյան



Մշակող՝ «Մարգարտունի Քամայակ Արշակի» ԱԶ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն	4
2. Հավելվածներ	4
3. Օգտագործվող հապավումները	4
4. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը.....	5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ....	7
6. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.....	8
7. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	9
8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը	9
9. Շրջակա միջավայրի բնութագրերը	10
9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը	10
9.2. Սեյսմիկա և երկրաբանություն	11
9.3. Կլիմա և օդային ավազան	12
9.4. Հողային ռեսուրսներ	18
9.5. Ջրային ռեսուրսներ	18
9.6. Կենսաբազմազություն	19
9.7. Պատմության և մշակութային հուշարձաններ	20
9.8. Հատուկ պահպանվող տարածքներ.....	21
9.9. Սոցիալ-տնտեսական.....	22
10. Նախատեսվող գործունեության.....	24
բնութագիրը և տեխնիկական-տեխնոլոգիական լուծումները.....	24
10.1 Արտադրական տարածք	24
10.2 Գործարանի արտադրատեսակը և արտադրական գործընթացները և հզորությունը	27
10.3 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	30
10.4 Ջրամատակարարում.....	30
10.5 Ջրահեռացում	31
10.6 Էլեկտրամատակարարում	34
10.7 Գազամատակարարումը.....	34
10.8 Ջերմամատակարարում և սառնամատակարարում.....	34
10.9 Օդափոխություն	35
10.10 Ավտոտրանսպորտ.....	35
10.11 Աղբահեռացում	35

10.12 Սոցիալական	35
11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.....	36
11.1 Օդային ավազան	36
11.2 Հողային ռեսուրսներ	37
11.3 Ջրային ռեսուրսներ.....	37
11.4 Կենսաբազմազանություն.....	39
11.5 Թափոններ	39
11.6 Աղմուկ և թրթռում.....	44
11.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	45
11.8 Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն.....	45
11.9 Աշխատանքի կազմակերպում, աշխատանքի անվտանգություն	45
11.10 Սոցիալական	46
11.11 Կանաչապատում	47
12. Մոնիթորինգ	47
12.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....	55
13.Հանրային ծանուցում և քնննարկումներ	59

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հայտ	Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթինգ Քամիկի Արմենիա» ՓԲԸ Կոկա Կոլայի արտադրության նախնական գնահատման հայտ
Ձեռնարկող	Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթինգ Քամիկի Արմենիա» ՓԲԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Երևան, Թբիլիսյան խճուղու Նրբանցքի 8/3
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Երևան, Թբիլիսյան խճուղու Նրբանցքի 8/3
Ձեռնարկողի հեռախոս, Էլեկտրոնային փոստ	liana.vardumyan@cchellenic.com , +374 93 198317
Պատվիրատու	«Մարգպետունի Քամայան Արշակի» ԱԶ
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	Քանաքեռ Չեյթուն վարչական շրջան, Թբիլիսյան խճուղու Նրբանցքի 8/3
Գնահատման հայտի նախագծող	«Մարգպետունի Քամայան Արշակի» ԱԶ
Հայտի մշակող ընկերության հասցե, հեռախոս, Էլեկտրոնային փոստ	Դավիթաշեն 3-րդ թաղամաս, 65 Marzpetuni Kamalyan info@kamalian.am Հեռ. +374 12 444 222

2. Հավելվածներ

- Հավելված 1.** Տարածքի սեփականության իրավունքի վկայականը և «Մարգպետունի Քամայան Արշակի» ԱԶ Պետ. Ռեգիստր
- Հավելված 2.** Տարածքի հատակագիծ, VGS կոորդինատներով
- Հավելված 3.** Վեոլիա ջրի պայմանագիրը
- Հավելված 4.** ՀԷՑ-ի էներգամատակարարման պայմանագիրը
- Հավելված 5.** Հայրուսգազարդի պայմանագիրը
- Հավելված 6.** Աղբահանության պայմանագիրը
- Հավելված 7.** Երևանի համայնքապետարանի նախնական համաձայնությունը
- Հավելված 8.** Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկ
- Հավելված 9.** Դիտողությունների պատասխան ամփոփաթեթ

3. Օգտագործվող հապավումները

- **ՇՄԱԳ՝** շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
- **ՇՄՆ՝** շրջակա միջավայրի նախարարություն
- **ՍՊԸ՝** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- **ՓԲԸ՝** փակ բաժնետիրական ընկերություն
- **PET՝** պլաստիկ շշերի արտադրության հոսքագիծ
- **BIB՝** օշարակի տարայավորման հոսքագիծ
- **RGB՝** ապակե շշերի արտադրության հոսքագիծ
- **ՀՕ՝** հակադարձ Օսմոս

4. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդր-սահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.) – Կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ

շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.) - Սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք(21.06.2014թ.)- Կարգավորում է սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, սննդի շղթայի և առևտրի ու հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգությանն առնչվող հարաբերությունները, ինչպես նաև ամրագրում է պետության կողմից նախատեսվող մարդու առողջության պաշտպանության երաշխիքները սննդամթերքի և սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի վնասակար ու վտանգավոր ազդեցությունից:

«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» (2014թ հունիսի 21) օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք(03.2018թ.՝ ՀՕ-284-Ն)-Կարգավորում է սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում պետական վերահսկողության հիմնական սկզբունքները, առանձնահատկությունները, պետական վերահսկողություն իրականացնող անձանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչպես նաև պետական վերահսկողության հետ կապված այլ հարաբերություններ:

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ **ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝** «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում՝** «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 15.03. 2007թ. N 385-Ն որոշում՝** «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին»:

- ❖ **ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի 160-Ն որոշում**՝ «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվների վերաբերյալ»:
- ❖ **Կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշում**՝ «Բնակավայրերի կանաչ գոտիչների չափերն ու տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781 որոշում**՝ «Հայաստանի հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման վերաբերյալ»:

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի, գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ: Համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի գ) ենթակետի սննդի արդյունաբերության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա է «Ոչ ակտիվային խմիչքների արտադրությունը՝ օրական 10000 դեկալիտր և ավելի»: «Կոկա-Կոլա Հելլենիկ Բրթինգ Զամփնի Արմենիա» ՓԲԸ-ի արտադրողականությունը վերազինման արդյունքում կհասցվի օրական 26 349 դեկալիտրի, նախկին՝ 19 677 դեկալիտրի փոխարեն:

Նախատեսվող գործունեությունները համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի, 1-ին մասի 7-րդ կետի. «Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում» ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեությունը համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի գ ենթակետի ներառված է Գ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության ենթակա է Գ կատեգորիայի ընթացակարգով, այս դեպքում՝ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ենթակա մեկ փուլով նախնական՝ համապատասխանաբար նախնական գնահատման հայտը:

Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի փորձաքննության ներկայացվող նախնական գնահատման հայտը պարունակում է՝

- 1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
- 2) նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.
- 3) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման.
- 4) նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).
- 5) շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու

փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.

6) տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լուսմների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ հնարավոր բացասական ազդեցությունները՝ նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Նախնական գնահատման հայտը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը:


6. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ն գործում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Թբիլիսի խճուղու Նրբանցքի 8/3 հասցեում գոյություն ունեցող արտադրական գոտում, սեփական տարածքում, համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ Հավելված 1:

Գործարանը գտնվում է խիտ բնակելի և հասարակական շենքերով կառուցապատված տարածքում: Ընթացիկ տարիների ընթացքում գործարանի տարածքը փոփոխությունների չի ենթարկվել: Բնակելի և հասարակական շինությունների անկանոն կառուցապատման հետևանքով այժմ ամենամոտ բնակելի շենքը գտնվում են մոտ 10մ հեռավորության վրա:

Գծապատկեր 1.

6.1 Տարածքի իրավիճակային հատակագիծը



7. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ընկերությունն՝ աշխարհում ոչ ալկոհոլային զովացուցիչ ըմպելիքներ արտադրող խոշորագույն ընկերություններից մեկի՝ հայտնի «Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Քամփնի» ընկերության մասնաճյուղն է, Հայաստանում գործունեություն է ծավալում 1996 թվականից: Ընկերությունը Հայաստանում «Կոկա-Կոլա Ընկերության» միակ լիազորված շաղկունն է:

«Կոկա-Կոլա Յեյլենիկ Արմենիա» ընկերությունը սպառողին առաջարկում է ոչ ալկոհոլային ըմպելիքների, մասնավորապես՝ հյութերի, նեկտարների, էներգետիկ ըմպելիքների և թեյերի լայն տեսականի, այդ թվում նաև աշխարհռչակ Կոկա-Կոլա, Ֆանտա և Սպրայտ զովացուցիչները:

Նախատեսվող գործունեություն է համարվում «Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի վերագինում, մասնավորապես.

- 2 լիտր տարողությամբ արտադրատեսակների համար (Ֆանտա նարինջ, Կոկա-Կոլա, Սպրայտ) շշեր փչելու կադապարների քանակը 10 հատից դարձվել է 20, ինչը բերել է տվյալ արտադրատեսակների արտադրողականության բարձրացման:
- Գործող շաղկուն մեքենայի արտադրողականությունն ավելի բարձր է, քան պիտակավորող մեքենայինը, շաղկուն մեքենայի տեխնիկական դադարների դեպքում ողջ հոսքագիծը կանգ է առնում՝ բերելով արտադրողականության նվազման: Մինչև պիտակավորման մեքենան՝ նախատեսվում է տեղադրել արտադրված շշերի կուտակման համար նախատեսված հատված /տարածք/, որն էլ ապահովում է շաղկուն մեքենայի կանգի դեպքում հոսքագծի մնացած հատվածի անխափան աշխատանքը՝ բարձրացնելով արտադրողականությունը:

Ընդհանուր առմամբ օրական արտադրողականությունը կհասցվի 26 349 դեկալիտրի, նախկին՝ 19 677 դեկալիտրի փոխարեն:

Տարեկան արտադրողականությունը ավելի քան 61 մլն լիտր է, նախատեսվում է վերագինումից հետո աստիճանաբար արտադրական ծավալները հասցնել մոտ 81 մլն լիտրի:

8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը

«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ն գործունեությունն իրականացնում է իր սեփականությունը համարվող Թբիլիսյան 8/3 հասցեում՝ 3.129754 հա տարածքում, որը գտնվում է Երևան քաղաքի հյուսիսային մասում Չեյթուն-Քանաքեռ վարչական տարածքում: Տարածքի նպատակային նշանակությունը արտադրական է, ընդերքօգտագործման և այլ արտադրական, գործառնական նշանակությունը՝ արտադրական օբյեկտ:

Արտադրական տարածքը պարսպապատված է՝ բարեկարգված, ասֆալտապատված և կանաչապատված: Տարածքում առկա է ավտոտեխասարկման կետ, բենզակայան, սառնարանների վերանորոգման կետ, կեղտաջրերի մաքրման կայան, թափոնների հավաքման կայան:՝ Հավելված 2

Տարածքի 120մ² մակերեսը կանաչապատ է:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝ գործարանի տարածքը 3129754 հա է: Մանակիրոտն տարածքում առկա են վարչական շենքը՝ 965,55 քառ.մ, պահեստը՝ 5270,92քառ.մ, արտադրամասերը՝ 8389,87քառ.մ, կեղտաջրերի մաքրման կայանը՝ 386,41 քառ.մ, բենզալցակայանը՝ 33,2քառ.մ մակերեսներով և այլ օժանդակ տարածքներ: /Հավելված 1/:

9. Շրջակա միջավայրի բնութագրերը

9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 830-ից մինչև 1550 մետր բարձրությունների վրա՝ Արաքսի Յրագղան վտակի ափին, Արարատյան դաշտի հյուսիս-արևելքում՝ հյուսիսային լայնության 40° 04' - 40° 14' և արևելյան երկայնության 44° 23' - 44° 37' միջև, երիտասարդ հրաբխային ու նստվածքային ապարներից կազմված 7-8-բալանոց սեյսմիկ և չորրորդ ժամային գոտիներում: Առավելագույն երկարությունը հյուսիսից հարավ 19,7 կմ է, արևմուտքից արևելք՝ 19,1 կմ: Կլիմային բնորոշ են տաք, չոր ամառներ և համեմատաբար կարճ, բայց ցուրտ ձմեռներ: Երևանը գտնվում է բարեխառն գոտու ցամաքային հատվածում, շրջապատված լեռներով ու լեռնաշղթաներով:

Նկար 1.

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ YEREVAN - CAPITAL

Վարչական շրջաններ District communities




Աջափնյակ	Ajapnyak
Ավան	Avan
Արաբկիր	Arabkir
Դավթաշեն	Davtashen
Էրեբունի	Erebuni
Կենտրոն	Kentron
Մալաթիա-Սեբաստիա	Malatia-Sebastia
Նոր Նորք	Nor Nork
Նորք-Մարաշ	Nork-Marash
Նուբարաշեն	Nubarashen
Շենգավիթ	Shengavit
Քանաքեռ-Զեյթուն	Kanaker-Zeytun

Активация Windows

Երևան քաղաքի տարածքը գտնվում է ծովի մակարդակից 830մ-ից (հարավ-արևմտյան մաս) 1550.0մ (հյուսիս-արևելյան մաս) բարձրության վրա: Կենտրոնի բարձրությունը մոտ 1000մ է: Երևան քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Յրագղան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Յրագղան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Շորաղբյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին: Երևան քաղաքի տարածքը բաժանվում է ռելիեֆի չորս տեսակների, որոնք են՝

- 1) Եղվարդի հրաբխային սարահարթը, Կոտայքի հրաբխային սարահարթը և Ջրվեժ-Նորք
- 2) հրաբխային սարահարթը ,
- 2) Շորաղբյուր-Նուբարաշեն թեք հարթությունը և Էրեբունի լեռնաշղթան,
- 3) Յրագղան, Գետառ և Շորաղբյուր գետերի գետային հարթավայրը
- 4): Մշակված հողերը (Նկար 2):



Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Ֆիզիկաաշխարհագրական պայմանները. Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմահարված, Էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

9.2. Սեյսմիկ և երկրաբանություն

Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Շրջանի սեյսմիկ պայմանները. Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀԸՆ-20.04.2020թ.-ի, տեղազևնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

9.3. Կլիմա և օդային ավազան

Երևանը գտնվում է բարեխառն գոտում՝ ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշերով: Դրա շնորհիվ այստեղ պարզ արտահայտվում են տարվա բոլոր չորս եղանակները: Ձմեռները ցուրտ են, երբեմն՝ ձնառատ: Ամռանը հիմնականում շոգ է, չորային: Տեղումների հիմնական մասը լինում է գարնանը, մասամբ՝ աշնանը: Կլիման կիսաչոր է: Տեղումների սակավությանը զուգահեռ՝ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է՝ հիմնականում ամբողջ տարին: Մառախլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես ամռանը հազվադեպ երևույթ է:

Երևանի կլիմայական տվյալները

Ամիս	հունվ	փետ	մարտ	ապր	մայ	հուն	հուլ	օգոս	սեպ	հոկ	նոյ	դեկ	Տարի
Ռեկորդային բարձր °C (°F)	19.5 (67.1)	19.6 (67.3)	28.0 (82.4)	35.0 (95)	34.2 (93.6)	38.6 (101.5)	41.6 (106.9)	42.0 (107.6)	40.0 (104)	34.1 (93.4)	26.0 (78.8)	20.0 (68)	42.6 (108.7)
Միջին բարձր °C (°F)	1.2 (34.2)	5.5 (41.9)	12.6 (54.7)	19.4 (66.9)	24.1 (75.4)	29.9 (85.8)	33.7 (92.7)	33.4 (92.1)	28.7 (83.7)	21.0 (69.8)	12.4 (54.3)	4.6 (40.3)	18.9 (66)
Միջին օրական °C (°F)	-3.6 (25.5)	0.1 (32.2)	6.3 (43.3)	12.9 (55.2)	17.4 (63.3)	22.6 (72.7)	26.4 (79.5)	26.1 (79)	21.1 (70)	13.8 (56.8)	6.2 (43.2)	-0.2 (31.6)	12.4 (54.3)
Միջին ցածր °C (°F)	-7.5 (18.5)	-4.4 (24.1)	0.7 (33.3)	7.0 (44.6)	11.2 (52.2)	15.4 (59.7)	19.4 (66.9)	18.8 (65.8)	13.4 (56.1)	7.5 (45.5)	1.1 (34)	-3.9 (25)	6.6 (43.9)
Ռեկորդային ցածր °C (°F)	-27.6 (-17.7)	-26 (-15)	-19.1 (-2.4)	-10.2 (13.6)	-0.6 (30.9)	3.7 (38.7)	7.5 (45.5)	7.9 (46.2)	0.1 (32.2)	-6.5 (20.3)	-14.4 (6.1)	-28.2 (-18.8)	-28.2 (-18.8)
Տեղումներ մմ (դյույմ)	20 (0.79)	21 (0.83)	29 (1.14)	51 (2.01)	42 (1.65)	22 (0.87)	16 (0.63)	9 (0.35)	8 (0.31)	32 (1.26)	26 (1.02)	20 (0.79)	296 (11.65)
Միջ. անձրևոտ օրեր	2	4	8	12	12	8	5	4	4	8	7	4	78
Միջ. ձնառատ օրեր	7	7	2	0.2	0	0	0	0	0	0.1	1	5	22
% խոնավություն	81	74	62	59	58	51	47	47	51	64	73	79	62
Միջին ամսական արևային ժամ	93.0	108	162	177	242	297	343	332	278	212	138	92	2474

Գործունեության տարածքի կլիմայական պայմանները ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի:

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 24-25°C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -2,9°C է, հարաբերական խոնավությունը 77% (ժ.15-ին), թույլ քամիները 2-3մ/վրկ արագությամբ:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Երևանի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Աղյուսակ 1.

Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան արձակ արագությունը	Բաց արձակ արագությունը	Բաց արձակ արագության թվային
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան «Արաբկիր»	1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Աղյուսակ 2.

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %												Միջին տարեկան, %	Միջին ամսական, ժամը 15-ին		
	Ըստ ամիսների													Ամենացուրտ ամսվա, %	Ամենաուշ ամսվա, %	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				

Երևան «Արաբկիր»	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35
--------------------	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 3

Բնակավայրի, օդերևութաբանակա ն կայանի անվանումը	միջին ամսական -----, մմ օրական առավելագույն												Ձնածածկույթ			
	Ըստ ամիսների												Տարեկան	Առավելա գույն տասն օրյակ ային բարձ րու թյունը, սմ	Տար վա մեջ ձնա ծած կույ թով օրերի քանակը	Ձյա ն մեջ ջրի առ ավ ելա գույ ն քա նա կը, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Երևան «Արաբկիր»	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53	152
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47			

Քամի

Աղյուսակ 4.


Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհող մութությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥ 15 մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, մ/վ												25	50	100
			Հյուսիսային (<ս)	Հյուսիսարևելյան (<սԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (<վԱրլ)	Հարավային (<վ)	Հարավարևմտյան (<վԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (<սԱրմ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8							
	2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0									

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, նախատեսվող գործունեության ենթակա տարածքում կազմում է 0,7 մետր:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ:

Ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգ/մ² է:

Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 45կգ/մ² է:



Օդային ավազան. Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Բաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան համաձայն՝ Գլխավոր (armmonitoring.am) էլեկտրոնային կայք էջի:

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2022 թվականի փետրվար ամսին կազմակերպության կողմից դիտարկումներ են կատարվել նաև Երևան քաղաքում: Համաձայն փետրվար ամսվա միջին ամսական կոնցենտրացիաների՝ փոշու, ազոտի երկօքսիդի, ծծմբի երկօքսիդի արտանետումները գտնվում են նորմայի սահմաններում և չեն գերազանցել ՍԹԿ նորմերը: Վերը նշված նյութերը գտնվում են.

- փոշին՝ 0,10-0,15մգ/մ³ սահմաններում (ՍԹԿ՝ 0,15մգ/մ³),

- ազոտի երկօքսիդը՝ 0,01-0,02 մգ/մ³ սահմաններում (ՍԹԿ՝ 0,04մգ/մ³),
- ծծմբի երկօքսիդը՝ 0,03-0,04մգ/մ³ սահմաններում (ՍԹԿ՝ 0,05մգ/մ³):

Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օդոսի միջին ամսական կոնցենտրացիաները նույն ժամանակահատվածի համար գտնվում են նորմայի սահմաններում, չեն գերազանցել 0,03մգ/մ³-ը:

9.4. Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սևնդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավազոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ավալիացած աղակալած:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021թ. 4-րդ եռամսյակում կատարված ուսումնասիրությունների արդյունքների՝ Երևան քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.4-1.8 անգամ, քրոմի պարունակությունը՝ 13.8-28.8 անգամ, նիկելի պարունակությունը՝ 18.3-25.3 անգամ, պղնձի պարունակությունը՝ 19.0-34.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 4.6-38.7 անգամ, արսենի պարունակությունը՝ 5.5-11.0 անգամ և կապարի պարունակությունը՝ 1.3-12.2 անգամ:

9.5. Ջրային ռեսուրսներ

Երևանի կենտրոնով հոսում է Հրազդան գետը՝ իր սելավաբեր և տարանցիկ Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ, Մուշաղբյուր վտակներով: Ներկայումս դրանք ներառվել են արհեստական հունների մեջ և սելավներից ու հեղեղումներից վնասագրծովել: Կառուցվել են Երևանյան լճի, «Հաղթանակ» զբոսայգու և այլ ջրամբարներ: Երևանում կան նաև այլ արհեստական կամ բնական լճակներ, որոնց մի մասը սնվում է ստորգետնյա արտեզյան ջրերից:

Գառնու և Ապարանի բարձունքներից խողովակներով Երևան հասնող ջուրը օգտագործվում է ոռոգման, ինչպես նաև՝ քաղաքի շատրվանների, արհեստական լճակների համար:

Երևանի ներկայիս 33 ջրավազաններից առավել կարևոր նշանակություն ունի Երևանյան լիճը, որը շահագործման է հանձնվել 1967 թվականին: Ավելի քան 40 տարվա ընթացքում լիճը հիմնովին չի մաքրվել(ներկայումս քաղաքապետարանի կողմից սկսվել են մաքրման աշխատանքները): Գետերով այնտեղ է լցվում հսկայական քանակությամբ կենցաղային և շինարարական աղբ, բերվածքների և թափոնների կուտակման հետևանքով ջրամբարի օգտագործման ծավալը գրեթե կիսով չափ նվազել է:

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս), որը պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ5-ով, ԹԶՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով,

մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

9.6. Կենսաբազմազուլթյուն

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում, շրջապատված է լեռներով ու լեռնաշղթաներով:

Բուսական աշխարհ.

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառա-բույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝

1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն),
2. Տոմիլյար (անապատային):

Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակները:

Կենդանական աշխարհ.

Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրագույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առազաստաթիթեռներ:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել

ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր:

Հանդիպում է «Սովորական երկարաթև չղջիկը», որը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

9.7. Պատմության և մշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ Երևան քաղաքի Քանաքեռ-2եյրոն վարչական տարածքի համար սահմանվում է հուշարձանների հետևյալ ցանկը.

Երևան քաղաքի Քանաքեռ-2եյրոն վարչական շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը.

Աղյուսակ 5

1	2	3	4	5	6	7	8
1			ԳԵՐԵՉՄԱՆՈՑ ՔԱՆԱՔԵՐԻ (ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ)	13-18 դդ.	Ջաքարիա Սարկավազի փող., որմնափակ խաչքարի մոտ	<	1: Ենթակայությանը ներկայացված է ևս 10 հուշարձան (1.1-1.2, 1.4-1.11)
	1.1		Խաչքար Պետևանի	1265 թ.		<	որմնափակ (1.3)
2			ՀՈՒՇԱԿԱՄԱԽԻՐ «ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄՈՆՈՒՄԵՆՏ»	1950-1985թթ.	Ազատության պող. 2, «Հաղթանակ» զբոսայգու կենտրոնում	<	10: Ենթակայությանը ներկայացված է 4 հուշարձան (10.1-10.4)
3			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԼԵՎՈՆ ԱՐԻՍՅԱՆԻ	1969 թ.	Պարույր Սևակի փող. 11, թիվ 127 դպրոցի առջև	S	11
4			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ	1985 թ.	Դավիթ Անհաղթի փող.	S	12

5		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀԿԱԾ ՔԱՆԱՔԵՌՑԻՆԵՐԻՆ	1971 թ.	Ջաքարիա Սարկավազի փող.	S	13
6		ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ	1965 թ.	Ազատության պող., թիվ 12 և 14 բնակելի տների միջև	S	14
7		ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ	18 դ. վերջ, 1939 թ., 1979 թ.	Քանաքեռի 2-րդ փող. 4	<	15: Ենթակայու- թյամբ ներկայացված է 4 հուշար- ձան (15.1- 15.4)

Հայաստանի հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Երևան քաղաքի պետական ցուցակը ներառում է 512 հուշարձան՝ 245 պահպանական միավորով:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Երևան քաղաքում առկա են հետևյալ բնության հուշարձանները.



Աղյուսակ 6.

1 «Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ
2 «Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արևմտյան ճակատամուտքի մոտ

Գործարանը գտնվում է արտադրական տարածքում, ուստի պատմության և մշակութային հուշարձանները տարածքում բացակայում են:

9.8. Հատուկ պահպանվող տարածքներ

Երևան քաղաքում ներկայումս գործում է Երևանի բուսաբանական այգին և Էրեբունի արգելոցը:

<u>Երևանի բուսաբանական այգի</u>		0.8 քկմ	1935
<u>Էրեբունի արգելոց</u>		1.2 քկմ	1981

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

9.9. Սոցիալ-տնտեսական

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական ցուցանիշները ներկայացված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքին համապատասխան.

Տարածքը Territory	223 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the city in the territory of the Republic of Armenia, %	0.7
Գյուղատնտեսական հշտեսության հողեր Agricultural land	3 330.0 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including - arable land	913.2 հա/ ha
Վարչական շրջաններ District communities	12
Բնակչության թվաքանակը 2021թ. ստրենկզբի դրությամբ Population number as of the beginning of the year, 2021	1 091.7 հազ. մարդ/ thb. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2020 թ., % Share of city population in the total population of the Republic of Armenia 2020, %	36.8

Համաձայն Երևանի քաղաքի զարգացման 2018-2022թթ. հնգամյա ծրագրի՝ Բանաքեռ-Չեյրուն վարչական տարածքի մակերեսը կազմում է 773 հա:

Համաձայն Երևան քաղաքի 2022թ. զարգացման ծրագրի՝ Երևան քաղաքի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 1091,747 մարդ, որից 2022թ. 504770 կազմում են տղամարդիկ, 586977-ը՝ կանայք: Բանաքեռ-Չեյրուն վարչական շրջանում բնակչության թիվը կազմում է 74900 մարդ:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով: Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Բանաքեռ-Չեյրուն: Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և Էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ): Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ

արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է: 2020թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 34.4 %
- շինարարություն՝ 57.5 %
- մանրածախ առևտուր՝ 70.3 %
- ծառայություններ՝ 87.0 %

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը, գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում: Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և երկաթուղով: Քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

2020թ. դրությամբ Երևան քաղաքում առկա են 224 պետական և ոչ պետական նախադպրոցական, 252 պետական և ոչ պետական հանրակրթական կրթական հաստատություններ, 50 երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 19 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ և այլն:

Համաձայն 2022թ. Երևան քաղաքի զարգացման ծրագրի՝ Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցություն առաջացնող շուրջ 671 կազմակերպություն: Երևան քաղաքի մթնոլորտային օդի և հողերի որակի վատթարացման հիմնական պատճառներից են քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները (շուրջ 600000 հատ), հրդեհները, կենցաղային և արդյունաբերական աղտոտումը, հողօտարումները, հողի էռոզիան, կանաչ տարածքների կրճատումը և այլն: Այդ նպատակով կարևոր է Երևան քաղաքում բուֆերային գոտիների պահպանումը, վերականգնումը և կանաչապատ տարածքների բարելավումը, ավելացումը, ոռոգման ցանցի ընդլայնում և բարեկարգումը:

10. Նախատեսվող գործունեության բնութագիրը և տեխնիկական-տեխնոլոգիական լուծումները

10.1 Արտադրական տարածք

Համաձայն նախագծային փաստաթղթերի՝ Կոկա կոլա գործարանում գործում են երեք հիմնական արտադրամասեր.

- պլաստիկ շշերի արտադրամաս (PET),
- օշարակի տարայավորման (BIB) արտադրամաս,
- ապակե շշերի (RGB) արտադրամաս:


Հիմնական արտադրամասերում գործում է երեք հոսքագիծ՝

- պլաստիկ շշերի արտադրության հոսքագիծ (PET հոսքագիծ),
- ապակե շշերի արտադրության հոսքագիծ (RGB հոսքագիծ),
- օշարակի լցման հոսքագիծ (BIB հոսքագիծ):

Նկար 4 Օշարակի լցման հոսքագիծ /BIB/



Նկար 5 Պլաստիկ շշերի արտադրության հոսքագիծ /PET/



Նկար 6 Ապակյա շշերի հոսքագիծ /RGB հոսքագիծ),



Ընդհանուր արտադրական տարածքը ներառում է.

1. Պատրաստի արտադրանքի պահեստ, որն օգտագործվում է արտադրված և ներմուծված արտադրատեսակների ժամանակավոր պահեստավորման համար:

2. Արտադրական մասնաշենք- իր մեջ ներառում է հետևյալ օժանդակ կառույցները՝

2.1 Հոլմքի՝ կյուբի պահեստ, որն օգտագործվում է հոլմք կյուբերի, ինչպես նաև օգտագործվող քիմիկատների պահպանման նպատակով:

2.2 Մարքեթինգի պահեստ, որն օգտագործվում է մարքեթինգային կյուբերի պահպանման նպատակով:

2.3 Լաբորատորիա, որտեղ իրականացվում են ինչպես հոլմք կյուբերի, այնպես էլ արտադրանքի որակի վերահսկման անալիզներ՝ ֆիզիկաքիմիական և միկրոբիոլոգիական:

2.4 Հանդերձարաններ, լվացքատուն, ճաշարան:

2.5 Սառեցման համակարգ, ածխաթթու գազի նախկին արտադրամաս, որը ծառայելու է որպես պահեստ, ցածր ճնշման կոմպրեսորային կայան, կաթսայատուն:

2.6 Օշարակի պատրաստման տարածքներ:

2.7. Ջրերի մշակման կայան, որտեղ առկա են 5 բաքեր ջրերի փուլային մշակման համար: Ջրերի մշակման ՀՕ կայան, որտեղ առկա են 2 բաքեր ջրերի փուլային մշակման համար:

2.8. Վաճառքի սենյակ:

3. Զաղաքային ցանցից մատակարարվող ջրի պահման 2 բաքեր՝ յուրաքանչյուրը 900 մ³ ծավալով:

4. Ավտոտեխսպասարկման կայան:

5. Կեղտաջրերի մաքրման կայան:

6. Վարչական շենք:

7. Բարձր ճնշման կոմպրեսորների տարածք:

8. Կանաչապատ տարածք:

9. Բենզալցակայան:

10. Պոմպակայան:

Կաթսայատուն- տեղադրված է գործարանի ներսում, կաթսայատանը տեղադրված են 1 հատ Weishaupt-2500 և 1 հատ Sixen 5000 մակնիշի շոգեկաթսաներ: Կաթսայատունը շահագործվում է արտադրական, ջեռուցման և տաք ջրամատակարարման նպատակներով: Կաթսայատունն աշխատում է ձմռանը 24 ժամյա ռեժիմով՝ 150 օր, ամռանը՝ 16-ժամյա գրաֆիկով: Weishaupt-2500 կաթսայի արտադրողականությունը կազմում է 2,5տ/ժամ, իսկ Sixen - 5000 կաթսայինը՝ 5տ/ժամ գոլորշի:

Կաթսայատանը տեղադրված երկու կաթսաներից մեկը պահեստային է: Կաթսաները համալրված են գազայրիչներով և այրման ռեժիմի ավտոմատ կարգավորիչներով, ինչպես նաև անվտանգությունն ապահովող անհրաժեշտ սարքավորումներով, վթարային անջատիչներով, ձայնային և լուսային ազդանշաններով: Կաթսայատունն աշխատում է բնական գազով, տարեկան միջին ծախսը կազմում է 450000մ³/տարի:

Ունի պահուստային վառելիք՝ դիզելային վառելիքն է 10տ/տարի քանակով, որն օգտագործվելու է գազի հնարավոր բացակայության դեպքում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ածխաթթու գազի արտադրամասում տեղադրված կաթսան ապամոնտաժվել է, ուստի վերագինման և արտադրանքի ավելացման արդյունքում գազի և դիզելային վառելիքի քանակների ավելացում չի նախատեսվում:

Ածխաթթու գազի ստացման արտադրամասը ապամոնտաժվելու է, առաջացած սարքավորումները կամ վաճառվելու են, կամ որպես թափոն հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին, տարածքն օգտագործվելու է որպես պահեստ: Ածխաթթու գազն ընկերությունը ձեռք կբերի Հայաստանյան ածխաթթու գազի արտադրող այլ համապատասխան ընկերություններից:

Ավտոտեխսպասարկման կայան. Դիզվառելիքի պահպանում և լիցքավորում- նախատեսված է սեփական կարիքների և մեքենաների լիցքավորման համար: Դիզվառելիքը պահվում է 20տ տարողությամբ բաքի մեջ՝ մեկուսացված բաքի համար նախատեսված հատուկ փակ տարածքում: Այն փակ համակարգով միացված է համապատասխան սարքին:

Մեխանիկական տեղամաս-տեղամասում կատարվում է արտադրության համար անհրաժեշտ սարքավորումների վերանորոգման և եռակցման աշխատանքներ, որտեղից արտանետվում են աննշան քանակի մետաղական փոշի, եռակցման աերոզոլ, մանգանի օքսիդներ: Արտանետումների չնչին քանակների պատճառով 2021թ. Շրջակա միջավայրի նախարարության կողմից հաստատված ՍԹԱ նախագծի հաշվարկներում չեն ընդգրկվել:

Սանիտարա-պաշտպանիչ գոտի. համաձայն 245-71 արտադրական ձեռնարկությունների սանիտարական նորմերի՝ նախատեսվող գործունեության համար սահմանված է 50մ սանիտարա պաշտպանիչ գոտի, ինչը հաշվարկվում է արտանետման աղբյուրից, տվյալ դեպքում կաթսայատան խողովակից հեռավորությունը 65մ է::

10.2 Գործարանի արտադրատեսակը և արտադրական գործընթացները և հզորությունը

Գործող գործարանում և վերազինման արդյունքում արտադրվող արտադրատեսակի տեսակային կազմի փոփոխություններ չի նախատեսվում, արտադրվելու է նույն կոկա-կոլան՝ քանակային փոփոխությամբ՝ ներկայիս 61 մլն.լիտր/տ փոխարեն նախատեսում է վերազինումից հետո աստիճանաբար արտադրական ծավալները հասցնել մոտ 81 մլն.լիտր/տարի (81682մ³/տարի):

Գործարանում առկա է երեք հոսքագիծ.

- PET հոսքագիծ՝ արտադրվում են 0.5լ, 1.0 լ, 1.5լ, 2.0 լ արտադրատեսակներ (Կոկա-Կոլա, Կոկա-Կոլա առանց շաքար, Կոկա-Կոլա առանց շաքար լայմի համով, Ֆանտա Նարինջ 1% բնական հյութի պարունակությամբ, Ֆանտա Էկզոտիկ, Սպրայթ և Բոն Ակվա):
- RGB հոսքագիծ՝ արտադրվում են 0.5լ, 1.0 լ, 1.5լ, 2.0 լ արտադրատեսակներ (Կոկա-Կոլա, Կոկա-Կոլա առանց շաքար, Կոկա-Կոլա առանց շաքար լայմի համով, Ֆանտա Նարինջ 1% բնական հյութի պարունակությամբ, Ֆանտա Էկզոտիկ, Սպրայթ):
- BIB հոսքագիծ՝ արտադրվում են 5լ (Ֆանտա Նարինջ 1% բնական հյութի պարունակությամբ) և 10լ (Կոկա-Կոլա) արտադրատեսակներ պլաստիկ պարկերի մեջ:

Արտադրական գործընթացները: Վերազինումն իրականացվում է միայն պլաստիկ շշերի արտադրության արտադրական գործընթացում:

Պլաստիկ շշերի (PET) արտադրություն-արտադրական պրոցեսը սկսվում է պլաստիկ նախակաղապարների փչմամբ՝ շիշ փչող մեքենայում, 0.5 լ և 1.0 լ նախակաղապարները փչվում

են 16000 շիշ/ժամում արագությամբ, 1.5 լիտրը՝ 12500 շիշ/ժամում արագությամբ, 2.0 լիտրը՝ 9000 շիշ/ժամում արագությամբ: Այնուհետև դատարկ շշերը օդային հոսքագծով տեղափոխվում են դեպի ցայող մեքենա, որտեղ ստերիլ օդով կամ մշակված ջրով ցայվում են: Այնուհետև ստերիլ շշերը շշալցվում են շշալցող մեքենայում: Շշալցման արագությունը 0.5 և 1.0 րդեպքում 18000 շիշ/ժամում, 1.5 լիտր՝ 12000 շիշ/ժամում, 2.0 լիտր՝ 9000 շիշ/ժամում: Շշալցումից հետո տեղի է ունենում խցանավորում, և շշի վզիկի ցայում, այնուհետև խցանավորված շշերն անցնում են խոտանավորող մեքենայի միջով, որը ստուգում է լցման լրիվությունը և խցանի առկայությունը: Հաջորդ փուլում կատարվում է պիտակավորում՝ պիտակավորող մեքենայում: Պիտակավորման արագությունը 0.5 և 1.0 րդեպքում 18000 շիշ/ժամում, 1.5 և 13000 շիշ/ժամում, 2.0 և 10000 շիշ/ժամում: Պիտակավորված շշերն այնուհետև հոսքագծով անցնում են ակցիզավորման և կոդավորման փուլերը: Հաջորդիվ կատարվում է փաթեթավորվում և պալետավորվում՝ ավարտելով պլաստիկ շշերի արտադրական փուլը:

Վերազինման արդյունքում պլաստիկ շշերի արտադրամասում իրականացվելու են հետևյալ գործողությունները, որոնք բերելու են արտադրողականության աճի՝ ներկայիս տարեկան 61 մլն լիտրը հասցնելով մոտ 81 մլն լիտրի:

1. 2 լիտր արտադրատեսակների համար (Ֆանտա նարինջ, Կոկա-Կոլա, Սպրայտ) շշեր փչելու կադապարների քանակը 10 հատից դարձվել է 20, ինչը բերելու է տվյալ արտադրատեսակների արտադրողականության կրկնակի բարձրացման:

2. Քանի որ շշալցման մեքենայի արտադրողականությունն ավելի բարձր է, քան պիտակավորող մեքենայինը, շշալցման մեքենայի տեխնիկական դադարների դեպքում ողջ հոսքագիծը կանգ էր առնում՝ բերելով արտադրողականության նվազման: Մինչև պիտակավորման մեքենան նախատեսվում է տեղադրել արտադրված շշերի կուտակման համար նախատեսված համապատասխան տարածք, որն էլ ապահովում է շշալցման մեքենայի կանգի դեպքում հոսքագծի մնացած հատվածի անխափան աշխատանքը՝ բարձրացնելով արտադրողականությունը: Նախակադապարները, հոսքագծի միջոցով մտնում են շիշ փչող մեքենայի մեջ, որտեղ յուրաքանչյուր չափի/տեսակի համար նախակադապարները տաքացվում են լամպերի միջոցով մինչև անհրաժեշտ ջերմաստիճան, որից հետո, մտնելով համապատասխան մետաղական կադապարի մեջ՝ մոլդ, բարձր ճնշման օդի միջոցով փչվում են և ստանում վերջնական շշի տեսք:

Ապակե շշերի /RGB/ արտադրություն– արտադրական պրոցեսն սկսվում է դեպալետավարող մեքենայի վրա դատարկ ապակե շշերի պադոնների տեղադրմամբ: Դեպալետավորող մեքենան 42000 շիշ/ժամում արագությամբ դատարկ շշերն արկղերով ուղարկում է անկեյգեր, որտեղ արկղերից շշերը հանվում և դրվում են հոսքագծին՝ դրանց լվացող մեքենա ուղարկելու համար (39000 շիշ/ժամում): Դատարկ կեղտոտ արկղերը գնում են դեպի արկղեր լվացող մեքենա՝ լվացման, այնուհետև դեպի կեյգեր: Շշեր լվացող մեքենայում կառուստիկ սոդայի 2.5-4.0 % լուծույթում (առկա երկու վաննաների մեջ՝ 60-65°C և 70-75°C) շշերը լվացվում են (Լվացող մեքենայի արագությունը՝ 36000 շիշ/ժամում), ցայվում ջրով և տեղափոխվում շշերը խոտանավորող մեքենա՝ (ASEBI) արագությունը՝ 33000 շիշ/ժամում: Խոտանավարող մեքենան անցած շշերը շշալցվում են շշալցման մեքենայում՝ 30000 շիշ/ժամում արագությամբ, խցանավորվում, և կրկին անցնում խոտանավորող մեքենայով, որը ստուգում է լցման լրիվությունը և խցանի առկայությունը: Հաջորդ փուլը պիտակավորումն է՝ 26000 շիշ/ժամում, կոդավորումը և ակցիզավորումը: Պատրաստի շշերն այնուհետև կեյգերում հավաքվում են արկղերի մեջ (36000 շիշ/ժամում) և տեղափոխվում պալետավորող մեքենայի մեջ, որտեղ էլ հավաքվում են պալետների վրա՝ 40 արկղ յուրաքանչյուր պալետում՝ 39000 շիշ/ժամում: Ապակե շշերի արտադրական փուլն այսքանով ավարտվում է:

Օջարակի տեղափոխում և տարայավորում (BIB)- արտադրական գործընթացը սկսվում է PET արտադրամասի պարամիքս սարքից օջարակի տեղափոխմամբ դեպի BIB սարքավորում,

որտեղ էլ այն լցվում է պլաստիկ տոպրակների մեջ՝ 5 և 10 լ ծավալով:


Օջարակների պատրաստման արտադրամաս-արտադրամասում շաքարը պարկերից դատարկվում է հատուկ բունկերի մեջ, այնուհետև տեղափոխվում նախապես մինչև 65°C տաքացված մշակված ջրով բաքի մեջ: Լուծման պրոցեսն ուղեկցվում է ակտիվացված ածխի ավելացմամբ՝ ստացվում է այսպես կոչված սև օջարակ: Այնուհետև լուծույթի ջերմաստիճանը բարձրացվում է մինչև 85°C, տեղի է ունենում պաստերիզացիա, որից հետո օջարակը ֆիլտրվում է: Ֆիլտրված օջարակը՝ սպիտակ օջարակ, սառեցվում է մինչև 20-25°C, և պահվում սպիտակ օջարակի համար նախատեսված հատուկ տանկում:

Յուրաքանչյուր արտադրատեսակի համար իրականացվում է վերջնական օջարակի պատրաստում՝ խառնելով սպիտակ օջարակ, բազմափուլ մշակված ջուր և համապատասխան խտանյութեր:


Թե պլաստիկ և թե ապակյա շշերով արտադրության ժամանակ յուրաքանչյուր արտադրատեսակի արդեն իսկ վերը նկարագրված մեթոդով ստացված վերջնական օջարակները պարամիքս (PET արտադրություն) և ինտերմիքս (RGB արտադրություն) կոչվող սարքերում խառնվում են ջրի հետ, գազավորվում և ուղարկվում շշալցող մեքենաներ:

Ջրի մշակման փուլեր-գազավորված ըմպելիքների և ջրի արտադրության համար քաղաքային ցանցից ստացված ջուրը տարբեր մշակման փուլեր են անցնում: Բնակվա ջրի արտադրության համար քաղաքային ջուրը մշակվում է հակադարձ Օսմոսի կայանում: Ջրի մշակման սխեմատիկ պատկերը բերված է ստորև:

Ջրերի բազմափուլ մշակման սխեմա



ՀՕ կայանի ջրի մշակման սխեմա



10.3 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Գործունեության իրականացման ընթացքում ընկերությունը բնական ռեսուրսներից օգտագործում է ջուր և բնական գազ, այլընտրանքային՝ դիզելային: Բնական գազն օգտագործվում է գործարանի ջերմամատակարարման, արտադրական գործընթացներում տաք ջրի և գոլորշու ստացման համար:

Որպես հումք օգտագործվում են հետևյալ նյութերը.

- պլաստիկ շերտի նախակադապարներ 0.5լ, 1.0 և 1.5լ, 2.0 և արտադրատեսակների համար, հումքը ձեռք է բերվում Հայաստանից, տարայավորված է պոլիէթիլենային տոպրակի մեջ, տեղադրված է մետաղյա արկղի մեջ:
- Պլաստիկ խցաններ՝ 170362.5 կգ/տ, ներկրվում է Վրաստանից, տարան՝ լցվում է պոլիէթիլենային տոպրակի մեջ, տեղադրվում է սովարաթղթե արկղի մեջ:
- Մետաղական խցաններ՝ ապակե շշով արտադրատեսակների համար՝ 44538 կգ/տ, ներկրվում է Հունաստանից, տարան՝ փաթեթավորվում է պլաստիկ թաղանթով և դրվում է սովարաթղթե արկղի մեջ:
- Թղթե պիտակներ՝ ապակե շշով արտադրատեսակների համար՝ 7262.36 կգ/տ, ձեռք է բերվում Հայաստանից, տարան՝ սովարաթղթե տուփ:
- Պլաստիկ պիտակներ՝ պլաստիկ շշով արտադրատեսակների համար՝ 25289.38 կգ/տ, ձեռք է բերվում Հայաստանից, տարան՝ փաթեթավորվում է պլաստիկ թաղանթով:
- Պլաստիկ թաղանթ՝ արտադրատեսակների փաթեթավորման համար՝ 156215 կգ/տ, ներկրվում է Ռուսաստանից և Ռումինիայի:
- Ապակե շիշ՝ 198066.141 կգ/տ, ներկրվում է Բուլղարիայից, փաթեթավորված թղթով, իրարից անջատվում է սովարաթղթե տակդիրով:
- Սովարաթուղթ՝ 210012 կգ/տ, ձեռք է բերվում Հայաստանից:
- Բոլոր արտադրատեսակների համար նախատեսված կոնցենտրատներ՝ 282202 կգ/տ, ներկրվում է Ֆրանսիայից, տարան՝ պլաստիկ 20 և ծավալով:
- Շաքարավազ՝ 5 300 000 կգ/տ, ձեռք է բերվում Հայաստանից, տարան՝ պլաստիկ պարկ:
- Ածխաթթու գազ՝ 731 170 կգ/տ, ձեռք է բերվում Հայաստանից:

10.4 Զրամատակարարում

Արտադրությունում ջուրն օգտագործվում է՝ արտադրական, օժանդակ և տնտեսա-կենցաղային նպատակներով: Արտադրական գործընթացում ջուրը հանդիսանում է կոկա-կոլայի պատրաստման հիմքը՝ հումքի մշակում, շերտի, սարքավորումների և տեխնոլոգիական գործընթացում՝ տարաների լվացում: Օժանդակ և տնտեսակենցաղային նպատակներով ջուրն օգտագործվում է կաթսայատան, ավտոտրանսպորտի սպասարկման, լաբորատորիայում, վարչական և սպասարկող անձնակազմի տնտեսակենցաղային կարիքների՝ ճաշարանի, հատակների լվացման, բաց տարածքների ջրցանման, կանաչ տարածքների ոռոգման համար: Ընկերության ջրամատակարարումն իրականացվում է համաձայն՝ «Վեոլա ջուր»ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի՝ 300մ հեռավորության վրա գտնվող կաթնաղբյուր 2-րդ ջրատարից:

Արտադրական կարիքների համար ջուրն օգտագործվում է՝

- արտադրանքի պատրաստման գործընթացում,
- սարքավորումների լվացման համար:

Մինչև վերազինումը, ներկա վիճակում ջրի ծախսը կազմում է 165,493մ³/տարի: Վերազինումից հետո ջրի ծախսը կկազմի 221,612 մ³/տարի:

Համաձայն արտադրության տեխնոլոգիական ցուցանիշների՝ արտադրանքի մեջ ջրի ծավալը կազմում է 90%: Վերագինումից հետո ընդհանուր արտադրանքը կազմելու է 81682020լ, ջուրն արտադրանքի մեջ կկազմի՝ 73513,82 մ³/տարի՝ անվերադարձ օգտագործվող ջուր:

Շշերի և տեխնոլոգիական սարքավորումների լվացման համար տեղադրված է Washer OR36E լվացող մեքենա, որը օրական կծախսի 259 մ³ ջուր, 80290մ³/տարի քանակով:

Օժանդակ կարիքների համար ջուրը ծախսվում է կաթսայատան կարիքների, ավտոտրանսպորտի սպասարկման համար և լաբորատորիայում:

Ընկերության օժանդակ կարիքների համար ջրի ընդհանուր ծախսը կկազմի 45309,65 մ³/տարի, որից լաբորատորիայի ջրի ծախսը կկազմի 1060 մ³/տարի, ավտոպարկի ջրի ծախսը՝ 13936,05 մ³/տարի, կաթսայատան կարիքների համար՝ 30313,6 մ³/տարի:

Տնտեսա կենցաղային կարիքների ջրածախսը:

$$W_{\text{տնտ}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2 + n_3 \times N_3) \times T,$$

որտեղ՝

n_1, n_2, n_3 – համապատասխանաբար ջրի ծախսի նորմատիվներն են, ԻՏԱ, սովորական արտադրամասեր, տաք արտադրամասերում աշխատողների սանիտարա-կենցաղային կարիքների համար՝ 16լ/օր, 25լ/օր, 45լ/օր:

N_1, N_2, N_3 - N_1, N_2, N_3 - համապատասխանաբար ԻՏԱ, սովորական արտադրամասեր, տաք արտադրամասերում աշխատողների թիվն է՝ 167, 153 և 6:

T- տարեկան աշխատօրերի թիվն է՝ 310օր:

$$W_{\text{տնտ}} = (0,016 \times 167 + 0.025 \times 153 + 0.045 \times 6) \times 310 = 2097.77 \text{ տարի:}$$

Ճաշարանի համար ջրի ծախսը հաշվարկված է 210 մարդ/օր, տարեկան աշխատող օրերի քանակը՝ 310օր: Ճաշարանի համար ջրի ծախսը կկազմի 2291.52 մ³/տարի:

Հատակների և բաց տարածքների լվացման ծախսը հաշվարկված է համապատասխանաբար՝ 15680 մ³/տարի և 2340 մ³/տարի, ընդամենը 18020 մ³/տարի:

Կանաչ 120մ² տարածքի 150 օր ոռոգման համար կպահանջվի 90 մ³/տարի ջուր:

Այսպիսով տնտեսա-կենցաղային կարիքների համար ընդհանուր ջրածախսը կկազմի 22499.29 մ³/տարի:

Ընդամենը ջրի ծախսը ընկերությունում կկազմի՝

$$W = 153803.82 + 45309.65 + 22499.29 = 221612.76 \text{ մ}^3 / \text{տարի}$$

10.5 Ջրահեռացում

Արտադրական հոսքաջրերը ներքին ցանցով ուղղորդվում են կենսաբանական մաքրման կայան, մաքրումից հետո հեռացվում են դեպի քաղաքային կոյուղու ցանց:

Կոկա-կոլայի արտադրությունում կեղտաջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ տեղի չի ունենում:

Մաքրման կայան. գործարանում տեղադրված է 400մ³/օր հզորության, «CUSS Chriwa Umwelt-Systemtechnik & Service GmbH. Chriwa Environmental System Technology & Service GmbH,

1431/B/0/BA, 03.01.2008, Germany» մակնիշի մաքրման կայան: Մաքրման կայանը նախատեսված է արտադրական կեղտաջրերի՝ շշերի և հատակների լվացման, լաբորատորիայի, կաթսայատան ջրերի քիմմաքրման և ածխաթթու գազի արտադրական հոսքերի մաքրման համար:

Կայանը կազմված է հետևյալ հանգույցներից.

- նավթամթերքի ավազե որսիչներ
- չեզոքացման բլոկ
- կենսաբանական մաքրման բլոկ
- պոմպակայան:

Կեղտաջրերի մաքրումն իրականացվում է 3 փուլով՝

- նախնական մեքանիկական մաքրում
- չեզոքացում
- կենսաբանական մաքրում:

Մաքրված արտադրական կեղտաջրերը ներքին ցանցով միանալով կենցաղային կեղտաջրերին թափվում են քաղաքային կոյուղի:

Մինչև վերագինումը գործարանի հոսքաջրերի քանակը կազմում է 95,019 մ³/տարի (306.49 մ³/օր): Ըստ կատարված հաշվարկների վերագինումից հետո գործարանի հոսքաջրերի քանակը կազմելու է 127229.413մ³/տարի կամ 410.4մ³/օր, որից 105382 մ³/տարեկան արտադրական կեղտաջրերն են, մնացածը տնտեսա-կենցաղային հոսքաջրերը: Մաքրման կայան ուղղորդվում են արտադրական հոսքաջրերը, որոնք մաքրումից հետո միանում են կոմունալ-կենցաղային կեղտաջրերին և թափվում են քաղաքային կոյուղի:


Կեղտաջրերի մաքրման կայան

4. SBR 1 բաբ-
օդափոխության բաբ

3. BENB բաբ: ջրի չեզոքացում
(CO₂-ով կամ կաուստիկով) և
նախնական օդափոխություն



5. SBR 2 բաբ-
օդափոխության բաբ



6. Արտահոսքի բաբ-
ջուրը քլորացվում և
թափվում է
քաղաքային գիծ

Ակտիվ նստվածքի
բաբ- հավաքում
հետագա
ֆիլտրման համար

2. Ցուղերի ֆիլտրում
(ստորգետնյա)- յուրային
ցանկազած արտահոսք
նանիետու համար:
Պահանջվում է
պարբերական
ստուգումներ և մաքրում

1. Ֆիլտրում
(ստորգետնյա)-
ֆիզիկական
արտոտիները
մաքրելու համար:
Պահանջվում է
պարբերական
ստուգումներ և
մաքրում

Արտադրական կեղտաջրերի մաքրում են տեղում և թափվում քաղաքային կեղտաջրերի մաքրման կայան

Քաղաքային կոյուղու կոլեկտոր ուղղվող արտադրական կեղտաջրերի և տնտեսա-կենցաղային կեղտաջրերի բաղադրությունն ամբողջությամբ համապատասխանում է կոյուղու ցանց թափվող ջրի ջերմաստիճանը, բաղադրությունը՝ pH-ը, $\text{BOD}_{5\text{C}}$, COD_{Cr} -ի, կախյալ նյութերի, քլորիդների, սուլֆատների, նիտրատների, մակերևութային ակտիվ նյութերի համար սահմանված նորմաները՝ «Աերացիայ»-ի կայան մուտք գործող կեղտաջրերի համար ՀՀ-ում ընդունված աղտոտող նյութերի նորմատիվ պահանջներին: Մաքրման կայանն ապահովում է 90% մաքրում, pH-ը՝ 6-9-ի սահմաններում, ջերմաստիճանը՝ 40°C:

Կեղտաջրերի կազմը և հաստատված ԹՍԱ-ն ըստ վնասակար նյութերի Աղյուսակ 9

h/h	Վնասակար նյութերի անվանումը	Արտահոսքի խտությունը մգ/լ		Կոյուղու ցանցի սահմանափակում
		Արտադրական կեղտաջրեր	Մաքրման կայանից հետո	
1	ԹԿՊ _{լրիվ}	856.8	42.84	240
2	ԹՔՊ	1711.0	85	360
3	Կախյալ նյութեր	36.5	25.5	215
4	Չոր մնացորդ	578	578	1000
5	Սուլֆատներ	38	38	500
6	Քլորիդներ	90	90	350
7	Նիտրատներ	11	0.55	10
8	նավթամթերք	0.21	0.15	25
9	Մակերևութային ակտիվ նյութեր	1.9	1.6	20

Ջրի կենսաբանական մաքրման գործընթացից՝ թափոնաջրերի տիղմի ֆիլտրումից, առաջանում է տարեկան 3000կգ ջրի կենսաբանական մշակման մնացորդային շլամ, որը տարվում է աղբավայր: Իսկ մաքրման արդյունքում դուրս եկած ջրերը լցվում են քաղաքային կոյուղի:

Ձեռնարկության ջրամատակարարումը և ջրահեռացումը կատարվում է «Կոկա-Կոլա Յելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի և «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն (Հավելված 3):

Գործարանի տարածքից անձրևաջրերը հեռացվում են ինքնահոս դեպի կոյուղու ցանց:

10.6 Էլեկտրամատակարարում

Ձեռնարկության Էլեկտրամատակարարումը կատարվում համաձայն՝ «Կոկա-Կոլա Յելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ին «ՅԷՑ» ՓԲԸ-ի միջև կնքված Էլեկտրամատակարարման պայմանագրի: Հավելված 4

Տրանսֆորմատորային ենթակայանում տեղադրված է 2 հատ 6/0,4 ԿՎ լարման 2000 կՎԱ հզորության եռավազ երկփաթույթ TC տիպի, չոր մեկուսացմամբ ուժային տրանսֆորմատորներ, որոնց սնուցումը իրականացվելու է ճկվ ԲՍ-ից մալուխագծով:

10.7 Գազամատակարարումը

Իրականացվում «Կոկա-Կոլա Յելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի միջև կնքված բնական գազի մատակարարման պայմանագրի համաձայն: Հավելված 5

Նախատեսվում է այլընտրանքային պահուստային դիզվառելիք՝ գազի բացակայության դեպքում:

10.8 Ձերմամատակարարում և սառնամատակարարում

Իրականացվում է գործարանում առկա կաթսայատնից՝ տաք ջրի մատակարարման և Էլեկտրական սալիկների միջոցով:

Ձերմության, օդափոխության և օդի լավորակման համակարգերի համար օգտագործվում է

գործարանում գոյություն ունեցող կաթսայատուները:

Սառնամատակարարման համար օգտագործվում է 527կՎՏ դրվածքային հզորության սանարանային մեքենա(չիլեր):

10.9 Օդափոխություն

Գործարանն ապահովված է օդի ներածման և արտածման մեխանիկական համակարգերով՝ արտադրամասում և օժանդակ տարածքներում օդափոխության կարգավորման նպատակով:

Գործարանի ջեռուցման և օդափոխության համակարգերը պետք է համապատասխանեն ՀՀ ՇՆ IV-12.02.01-04 «Զեռուցում, օդափոխում և օդի լավորակում» պահանջներին: Շշայցման արտադրամասի համար առկա է վերաշրջանառությամբ ընդհանուր փոխանակային օդափոխության և օդի լավորակման համակարգ՝ 50% հաշվարկային հզորությամբ ներածման-արտածման տեղակայումներով: Ներածման-արտածման տեղակայումներում կատարվում է օդի երկաստիճան մաքրում՝ G4 և F7 կարգի ֆիլտրերով: Օդի սառեցումը և տաքացումը կատարվում է համապատասխանաբար ջրային օդասառեցուցիչով և ջրային օդատաքացուցիչով: Օդի արտածումը կատարվում է հատակի վրա տեղադրված արտածման տերմինալների միջոցով: Արտադրամասի տեխնոլոգիական բացվածքների համար նախատեսված է օդապատվարներ:

Պլաստիկ շէրի օդափչման և փաթեթավորման սարքավորումներից նախատեսված է օդի տեղային արտածում: Պլաստիկ շէրի օդափչման սարքավորումից օդի հեռացումը կատարվում է սարքավորման օդահեռացման կողովներից, որոնք միացված են տեխնոլոգիական արտածման օդատարներին:

Փաթեթավորման սարքավորումից օդի հեռացումը կատարվում է գծային վառարանի աջ և ձախ կողմերում մոնտաժված արտածման գլխանոցների միջոցով:

10.10 Ավտոտրանսպորտ

Գործարանն ապահովված է սեփական ավտոտրանսպորտով՝ 165 հատ մեքենաներով, որից 41 բեռնատար, օգտագործվում են պատրաստի արտադրանքի առաքման համար, մարդատար՝ 123, շուկայի զարգացման պատասխանատուների, շուկայում սառնարանների սպասարկում իրականացող տեխնիկների և ղեկավար անձնակազմի համար, և 1 ավտոբուս՝ անձնակազմին տեղափոխելու համար:

10.11 Աղբահեռացում

Գործարանի աղբահեռացումը կատարվում է համաձայն Երևանի համայնքապետարանի հետ կնքված պայմանագրի: Հավելված 6:

Տարածքում տեղադրված են 2 հատ 2 x 1.5 չափերի աղբաման:

Կենցաղային աղբի տեսակավորման համար առկա է նաև աղբի տեսակավորման մետաղյա աղբամաններ:

10.12 Սոցիալական

Գործարանում աշխատում են 326 մարդ, որից վարչական աշխատողներ և ծառայողներ՝ 167, բանվորներ 153, լաբորատորիայում 6 մարդ: Գործարանը տարվա ընթացքում աշխատում է 310 օր:

11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է նախնական գնահատման հայտում նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, թափոնների կառավարման, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի բարձրացման և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ՝ ուղղված մարդու կյանքի անվտանգության և առողջության ապահովմանը:

Նախատեսվող գործունեության վերազինման արդյունքում շրջակա միջավայրի աղտոտումը՝ հողային և ջրային ռեսուրսների, օդային ավազանի աղտոտվածությունը և մարդու առողջության վրա ազդող հնարավոր ռիսկերը հնարավորինս նվազեցնելուն ուղղված նախատեսվել են մի շարք միջոցառումներ:

11.1 Օդային ավազան

Կոկա-կոլայի արտադրության գործարանի աշխատելու ընթացքում լինում են օդային ավազան արտանետումներ՝ կաթսայատնից: Կաթսայատունը նախատեսված է ջեռուցման և արտադրական գործընթացում գոլորշու և տաք ջրի մատակարարման համար:

Համաձայն Շրջակա միջավայրի նախարարության կողմից հաստատված ՍԹԱ նորմատիվների նախագծի կաթսայատունն աշխատում է բնական գազով, տարեկան միջին ծախսը 450000մ³/տարի: Պահուստային դիզելային վառելիքն է՝ 10տ/տարի: Գազի և դիզելային վառելիքի այրման ժամանակ արտանետման 1 աղբյուրից արտանետվելու են մոխիր, ծծմբային անհիդրիդ, ազոտի օքսիդներ, ածխածնի օքսիդ:

Գազի և դիզելային վառելիքի այրման ժամանակ արտանետվելու են մոխիր, ծծմբային անհիդրիդ, ազոտի օքսիդներ, ածխածնի օքսիդ, արտանետվում են երկրորդ աղբյուրից:

Գազի ընդհանուր ծախսը կազմում է 1150000 մ³/տարի:

Գազի այրման դեպքում առաջանալու է .

- ածխածնի օքսիդ՝ 10,810տ/տարի
- ազոտի օքսիդներ՝ 3,691տ/տարի քանակով:

Դիզելային վառելիքի այրման դեպքում հաշվարկված արտանետումների քանակներն են.

- կախված մասնիկներ՝ 0,020տ/տարի
- ծծմբային անհիդրիդ՝ 0,744տ/տարի
- ածխածնի օքսիդ՝ 11,015 տ/ տարի
- ազոտի օքսիդներ՝ 3,772տ/տարի:

Արտադրամասի վերազինման արդյունքում գազի ծախսի ավելացում չի կատարվելու, քանի որ վերազինումը կատարվելու է միայն պլաստիկ շշերի արտադրամասում, միաժամանակ հանվելու է ածխաթթու գազի արտադրման արտադրամասը, որն ավելի էներգատար էր: Ուստի կաթսայատան աշխատաժամանակի, ինչպես նաև գազի ծախսի ավելացում չի լինելու, հետևաբար օդային ավազան արտանետումների քանակական փոփոխություն չի առաջանալու:

Օդային ավազանի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 06.12.2010թ.-ի՝ «Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին N 27-Ն հրամանի պահանջները,

- պարբերաբար իրականացնել սարքավորումների հսկում, դրանց հերմետիկության ստուգումներ,

- բացառել անսարք վիճակում կաթսաների աշխատանքը,

- կաթսայատան, ինչպես նաև այլ սարքավորումների անսարքության ժամանակ սարքավորումներն անջատել, դադարեցնել կաթսաների գազի կամ դիզվառելիքի մատակարարումը՝ օդային ավազան վնասակար արտանետումները կանխելու նպատակով,

- անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում սահմանափակել վառելիքի մատակարարումը կաթսաներ,

- հոսքազծերի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետների կողմից,

- կատարել օդային ավազանի մոնիթորինգ՝ գազի այրման տեխնոլոգիական գործընթացքում ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդների, դիզելային վառելիքի դեպքում նաև ծծմբային անհիդրիդի գերնորմատիվային արտանետումները կանխելու, նորմատիվային քանակները պահպանելու նպատակով,

- վթարի հետևանքով ՍԹԱ նորմատիվը գերազանցելու դեպքում, դադարեցնել աշխատանքը, ձեռնարկել համապատասխան կանխարգելիչ միջոցներ և տեղյակ պահել մթնոլորտի պահպանության համապատասխան գերատեսչական մարմին:

11.2 Հողային ռեսուրսներ

Արտադրամասի վերազինումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող գործարանի տարածքում, որը երկար տարիներ գտնվում է մարդածին ազդեցության գոտում: Գործունեության իրականացման վայրը բարեկարգված և ասֆալտապատված է: Արտադրական տարածքը և թափոնների պահպանման վայրերը բետոնապատված են: Արտադրամասում տեղադրված հոսքազիծերն աշխատում են փակ համակարգով՝ հատուկ նախատեսված փակ տարածքներում, ուստի հողային ռեսուրսների մեջ կեղտաջրերի հնարավոր ներթափանցումը բացառված է:

Վերազինման ընթացքում նոր տարածքներ չեն օտարվելու և նոր հողային ռեսուրսների խախտում կամ աղտոտում չի կատարվելու, հետևաբար հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցության միջոցառումներ չեն նախատեսվում:

11.3 Ջրային ռեսուրսներ

Գործարանի արտադրական գործընթացում օգտագործվում է խմելու որակի ջուր: Ջուրն օգտագործվում է կոկա-կոլայի պատրաստման, տեխնոլոգիական գործընթացում սարքավորումների, լաբորատորիայի, շշերի, տարաների, հատակների լվացման, օժանդակ տարածքների՝ կաթսայատան կարիքների, վարչական և սպասարկող անձնակազմի տնտեսակենցաղային կարիքների համար: Ջուրն օգտագործվում է նաև բաց տարածքների լվացման, ջրցանման և ոռոգման համար:

Վերազինումից հետո արտադրությունում կատարվող ընդհանուր ջրի փաստացի ծախսն ըստ կատարված հաշվարկների՝ կազմում է 221612.76մ³/տարի, որից.

- արտադրական կարիքների համար՝ 153803,82 մ³/տարի ջուր,
- օժանդակ կարիքների համար՝ 45309,65 մ³/տարի ջուր,
- տնտեսա-կենցաղային կարիքների համար՝ 22499,29 մ³/տարի ջուր:

Կեղտաջրեր. արտադրական գործընթացում առաջանում են հոսքաջրեր՝ 127229.413 մ³/տարի ծավալով, որից

- արտադրական – 105382մ³/տարի, հոսքաջրերի 82,8%-ը,
- տնտեսա-կենցաղային-21847.413մ³/տարի հոսքաջրերի 17,2%-ը:

Ձեռնարկությունում տնտեսա-կենցաղային և արտադրական հոսքաջրերը հեռացվելու են մեկ թողարկով՝ կոյուղու համակարգի միջոցով:

Կոյուղու կոլեկտոր ուղղվող արտադրական կեղտաջրերի որակական բաղադրությունը սահմանվում է կեղտաջրերի որակի և քանակի ցուցանիշների թույլատրելի արժեքներով (ՍԹԱ): Քաղաքային կոյուղու կոլեկտոր ուղղվող արտադրական և տնտեսա-կենցաղային կեղտաջրերի բաղադրությունն ամբողջությամբ համապատասխանում է կոյուղու ցանց թափվող ԹԿՊ_{տիվ}, ԹԶՊ-ի, կախյալ նյութերի, քլորիդների, սուլֆատների, նիտրատների, մակերևութային ակտիվ նյութերի համար սահմանված նորմաները՝ «ԱԷրացիա»-ի կայան մուտք գործող կեղտաջրերի համար ՀՀ-ում ընդունված աղտոտող նյութերի նորմատիվ պահանջներին:

Արտադրական տարածքում բացակայում են այլ ջրային ռեսուրսները, ուստի ըմպելիքի արտադրության ընթացքում կեղտաջրերի արտահոսք ջրային ռեսուրս տեղի չի ունենում:

Գործունեության իրականացման ընթացքում.

- արտադրական գործընթացում օգտագործվող ջուրը պետք է համապատասխանի խմելու ջրի որակի նորմերին,
- կոյուղու կոլեկտոր թափվող հոսքաջրերի որակական հատկանիշները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին,
- հեռացվող կեղտաջրերի խառնուրդի ակտիվ ռեակցիան (pH) կպահպանվի 6.5-9.0 սահմաններում, ինչպես նաև կախյալ նյութերի և այլ խառնուրդների պարունակությունները, կեղտաջրերի ջերմաստիճանը չպետք է գերազանցի 40⁰C,
- քաղաքային կոյուղու կոլեկտոր ուղղվող տնտեսա-կենցաղային կեղտաջրերի բաղադրությունն ամբողջությամբ համապատասխանում է «ԱԷրացիա»-ի մաքրման կայան մուտք գործող կեղտաջրերի համար ՀՀ-ում ընդունված աղտոտող նյութերի նորմատիվ պահանջներին, հոսքաջրերում սահմանված թույլատրելի կոնցենտրացիաներին,
- բացառվելու է կոյուղու ցանց այնպիսի նյութերի թափումը, որոնք կհանգեցնեն կոյուղու համակարգի խցանմանը, պոմպակայանների աշխատանքին, խողովակների քայքայմանը, կխաթարեն հոսքաջրերի բնականոն հոսքը:

Ընկերության ջրօգտագործման և ջրահեռացման քանակները որոշվել են համապատասխան հաշվարկներով, ելնելով նորմատիվային պահանջներից և փաստացի ծախսից:

Ընկերությունում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը համապատասխանում են 2.04.01-85 «Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի», 2.04.02-84 «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառույցներ», ՄՆԻՊ-ների պահանջներին:

11.4 Կենսաբազմազանություն

Գործունեությունն իրականացվում է արդեն գոյություն ունեցող արտադրական տարածքում, որտեղ կատարված են ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքեր: Հարակից տարածքները գտնվում են մարդածին ազդեցության գոտում՝ խիտ կառուցապատված են, ուստի բացակայում է բուսական և կենդանական աշխարհը: Վերազինման ընթացքում նոր տարածքներ չեն ներգրավելու, ծառահատումներ չեն կատարվելու:

11.5 Թափոններ

Համաձայն 2015թ. ընկերության կողմից հաստատված թափոնների անձնագրերի՝ գործունեության ընթացքում առաջանում են թափոններ: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N342-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի հանրապետության տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկի՝ գործունեության իրականացման ընթացքում առաջանում են թափոնների հետևյալ տեսակները և քանակները.

1., ծածկագիր՝ 94300200 04 00 4, վտանգավորության 4-րդ դաս, առաջանում է 3000կգ/տարի **ջրի կենսաբանական մշակման մնացորդային շլամ** քանակով:

- Առաջանում է կեղտաջրերի մշակման գործընթացում,
- թափոնաջրերի տիղմի ֆիլտրում:

Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով՝

* օրգանական զանգված(կեղտաջրերի կենսաբանական մաքրման համար օգտագործվող միկրոմիջավայր)՝ 10%:

* անօրգանական զանգված՝ ջրերի մշակման հոսքագծերի, տանկերի, խողովակաշարերի, դրենաժների մշակման համար օգտագործվող քիմիկատներ՝ 90%:

Թափոնը հրդեհապայթունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվություն չունի:

Մնացորդային շլամը կենցաղային աղբի հետ միասին աղբահանվում և տեղափոխվում է աղբավայր:

2. **Հանքային յուղերով աղտոտված փայտաթեփ**(յուղի բաղադրությունը 15%-ից պակաս)՝ ծածկագիր՝ 17130201 01 034, վտանգավորության 4 դաս, առաջանում է 5կգ/տարի քանակով:

- Առաջանում է տեխնիկական սպասարկման գործընթացում:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * փայտաթեփ՝ 94.12%,
 - * նավթահումքային յուղ՝ 5.95%,
 - * հալոգենաօրգանական միացություններ՝ 0.049մգ/լ

Թափոնը հրդեհավտանգ է, կոռոզիոն ակտիվություն չունի: Հանքային յուղերով աղտոտված փայտաթեփը հավաքվում և տեղափոխվում է փակ տարաներում, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին՝ ոչնչացման համար:

3.**Բանեցված տրանսմիսին յուղեր**, ծածկագիր՝ 54100206 02 03 3, վտանգավորության 3 դաս, առաջանում է 50կգ/տարի քանակով:

- Գոյանում է ավտոմեքենաների շահագործումից և տեխնիկական սպասարկմից:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.

- * նավթահումքային յուղ՝ 86.47%,
- * ջրի պարունակություն՝ 4.53%,
- * նստվածք՝ 8.79%,
- * հալոգենաօրգանական միացություններ՝ 3.12մգ/լ :

Թափոնը հրդեհավտանգ է, չունի կոռոզիոն հատկություն: Պահվում է հատուկ փակ տարաներում, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման կամ ոչնչացման նպատակով:

4.Բանեցված արդյունաբերական յուղեր, ծածկագիր՝ 54100205 02 03 3, վտանգավորության 3 դաս, առաջանում է տարեկան մինչև 100կգ/տարի քանակով:

- Գոյանում է՝ արտադրության սարքավորումների շահագործման արդյունքում:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * նավթահումքային յուղ՝ 91.2%,
 - * ջրի պարունակություն՝ 5.1%,
 - * նստվածք՝ 2.79%:
 - * հալոգենաօրգանական միացություններ՝ 0.91մգ/լ:

Թափոնը հրդեհավտանգ է, չունի կոռոզիոն հատկություն: Պահվում է հատուկ փակ տարաներում, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման կամ ոչնչացման նպատակով:

5. Բանեցված կոմպրեսորային յուղեր, ծածկագիր՝ 54100211 02 03 3, վտանգավորության 3 դաս, առաջանում է տարեկան մինչև 200կգ/տարի քանակով:

- Գոյանում է՝ արդյունաբերության, ավտոմեքենաների շահագործումից:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * նավթահումքային յուղ՝ 91.2%,
 - * ջրի պարունակություն՝ 6.14%,
 - * նստվածք՝ 3.28%,
 - * հալոգենաօրգանական միացություններ՝ 2.47մգ/լ:

Թափոնը հրդեհավտանգ է, չունի կոռոզիոն հատկություն: Պահվում է հատուկ փակ տարաներում, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման կամ ոչնչացման նպատակով:

6. Բանեցված դիզելային յուղեր, ծածկագիր՝ 54100203 02 03 3, վտանգավորության 3 դաս, առաջանում է տարեկան մինչև 1500կգ/տարի քանակով:

- Գոյանում է ավտոմեքենաների շահագործումից:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * նավթահումքային յուղ՝ 88.61%,
 - * ջրի պարունակություն՝ 5.53%,
 - * նստվածք՝ 5.79%,
 - * հալոգենաօրգանական միացություններ՝ 1.67մգ/լ:

Թափոնը հրդեհավտանգ է, չունի կոռոզիոն հատկություն: Պահվում է հատուկ փակ տարաներում, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման կամ ոչնչացման նպատակով:

7. Յուղոտված լաթեր, ծածկագիր՝ 5820060001014, վտանգավորության 4 դաս, առաջանում է տարեկան մինչև 100կգ/տարի քանակով:

- Գոյանում է՝ ավտոմեքենաների շահագործումից, սարքավորումների մաքրելուց:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * սինթետիկ պոլիմեր՝ 84.18%,
 - * նավթահումքային յուղ՝ 10.4%,
 - * ջրի պարունակություն՝ 2.47%,
 - * հալոգենատոգանական միացություններ՝ 4.21մգ/լ:

Թափոնը հրդեհավտանգ չէ, չունեն կոռոզիոն հատկություն: Պահվում է առանձին արկղերի մեջ:

8. Բանեցված ավտոմոբիլային յուղեր, ծածկագիր՝ 54100202 02 03 3, վտանգավորության 3 դաս, առաջանում է տարեկան մինչև 1500կգ/տարի քանակով:

- Գոյանում է ավտոմեքենաների շահագործումից:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * նավթահումքային յուղ՝ 89.33%,
 - * ջրի պարունակություն՝ 4.28%,
 - * նստվածք՝ 4.92%,
 - * հալոգենատոգանական միացություններ՝ 4.14մգ/լ:

Թափոնը հրդեհավտանգ է, չունի կոռոզիոն հատկություն: Պահվում է հատուկ փակ տարաներում, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման կամ ոչնչացման նպատակով:

9. Բանեցված գործվածքե կորդոլ դողածականներ, ծածկագիր՝ 57500203 13 00 4, վտանգավորության 4 դաս, առաջանում է տարեկան մինչև 600կգ/տարի քանակով:

- Գոյանում է ավտոտեխսպասարկումից:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * վուլկանացված պոլիմեր՝ 90.3%,
 - * պրոպիլենային մանրաթել՝ 4.6%,
 - * պոլիամիդ 6/կապրոն՝ 5.1%,

Թափոնը հրդեհավտանգ չեն, չունեն կոռոզիոն ակտիվություն: Պահվում է հատուկ փակ ջրակայուն տարաներում, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման կամ ոչնչացման նպատակով:

10. Բանեցված օդաճնշիչ դողեր, ծածկագիր՝ 57500200 13 00 4, վտանգավորության 4 դաս, առաջանում է տարեկան մինչև 600կգ/տարի քանակով:

- Գոյանում է ավտոտեխսպասարկումից:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * վուլկանացված պոլիմեր՝ 92.47%,
 - * պոլիամիդ 6/ կապրոն՝ 8.1%,

Թափոնը հրդեհավտանգ չեն, չունեն կոռոզիոն ակտիվություն: Պահվում է փակ տարածքում, հանձնվում է համապատասխան կազմակերպություններին օգտագործման կամ մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման կամ ոչնչացման նպատակով:

11. Բանեցված դողածածկաններ, ծածկագիր՝ 57500202 13 00 4, վտանգավորության 4 դաս, առաջանում է տարեկան մինչև 3000կգ/տարի քանակով:

- Գոյանում է ավտոմեքենաների տեխսպասարկումից:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
- * վուլկանացված պոլիմեր՝ 90.3%,
- * պոլիամիդ 6՝ 7.6%,
- * կապրոն՝ 2.1%,

Թափոնը հրդեհավտանգ չէն, չունեն կոռոզիոն ակտիվություն: Պահվում է համապատասխան վայրում, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման կամ ոչնչացման նպատակով:

12. Գործածված միանվագ ներարկիչներ, ծածկագիր՝ 97010800 13 053, վտանգավորության 3 դաս, առաջանում է տարեկան մինչև 100կգ/տարի քանակով:

- Գոյանում է բժշկական միջամտումից:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
- * պոլիպրոպիլեն՝ 98.47%,
- * վուլկանացված պոլիմեր՝ 1.67%,

Թափոնը հրդեհավտանգ չէն, չունեն կոռոզիոն ակտիվություն: Պահվում է փակ տարաներում, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին, մասնավորապես «Էկոլոգիա Վ.Կ.Յ»ՍՊԸ-ին, ոչնչացման նպատակով:

13. Բանեցված մետաղական կողով դողածածկաններ, ծածկագիր՝ 57500204 13 00 4, վտանգավորության 4 դաս, առաջանում է տարեկան մինչև 600կգ/տարի քանակով:

- Գոյանում է ավտոմեքենաների տեխսպասարկումից:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
- * վուլկանացված պոլիմեր՝ 91.4%,
- * պոլիամիդ 6/կապրոն՝ 5.1%,

Թափոնը հրդեհավտանգ չէն, չունեն կոռոզիոն ակտիվություն: Պահվում է համապատասխան վայրում, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման կամ ոչնչացման նպատակով:

14. Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, ծածկագիր՝ 92110100 13 012, վտանգավորության 2 դաս, առաջանում է տարեկան մինչև 300կգ/տարի քանակով:

- Գոյանում է ավտոմեքենաների շահագործումից, տեխսպասարկումից:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
- * պոլիպրոպիլեն՝ 4.17%,
- * պոլիուրետեն՝ 9.78%,
- * կապար՝ 32.4%,
- * ծծմբական թթու՝ 6.12%,
- * ջուր՝ 9.17%:

Բանեցված կապարե կուտակիչները հրդեհավտանգ չեն, իսկ կուտակիչներում առկա էլեկտրոլիտն օժտված է կոռոզիոն ակտիվությամբ: Պահվում է հատուկ առանձնացված

վայրում(հեռու վարչական, կենցաղային շինություններից)՝ տակդիրների վրա, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման նպատակով:

15. Բենզինով աղտոտված փայտաթեփ (բենզինի բաղադրությունը 15%-ից պակաս), ծածկագիր՝ 17130301 01 034, վտանգավորության 4 դաս, առաջանում է տարեկան մինչև 5կգ/տարի քանակով:

- Գոյանում է ավտոմեքենաների տեխսպասարկումից:
- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * փայտաթեփ՝ 89.74%,
 - * նավթահումքային կյութեր՝ 4.17%,
 - * ջրի պարունակություն՝ 6.12%,
 - * հալոգենատրոգանական միացություններ՝ 0.96մգ/լ:

Թափոնը հրդեհավտանգ է, չունի կոռոզիոն հատկություն: Պահվում է հատուկ փակ տարաներում, հանձնվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին ոչնչացման նպատակով:

Փչացած կամ օգտագործված տարաներ՝ ապակի, պլաստիկ շշեր, պոլիէթիլենային փաթեթներ, ծածկագիր՝ 9703060013013, վտանգավորության 3 դաս:

Առաջանում է նաև կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ, գրասենյակային պարագաններ, թուղթ, սովարաթուղթ, ծածկագիր՝ 9120040001004, վտանգավորության 4 դաս:

2021թ. ընթացքում վերամշակման և ոչնչացման է ուղարկվել թափոնների 98%-ը:

Վերագինման արդյունքում այս թափոնների քանակական և որակական ցուցանիշները պահպանվելու են:

Գործունեության իրականացման ըթացքում առաջանում են նաև այլ կարգի թափոններ՝ ապակե կամ պլաստիկ շշեր, պիտակներ, խցաներ, հումքի և կյութերի փաթեթավորված ներկրման արդյունքում՝ պոլիէթիլենային տարրաներ և սովարաթուղթ:

Գործունեության ընթացքում առաջանալու են նաև փաթեթավորման կյութեր՝ պլաստիկ թափոններ 28,75տ/տարի, նախկին 25տ/տարի պլաստիկ թափոնների փոխարեն և սովարաթուղթ՝ 14,95տ/ տարի, նախկին 13 տոննայի փոխարեն:

Թափոնների վնասագերծման համար կիրառվում են նաև հետևյալ միջացառումները.

- թափոնները պահվում են առանձնացված սենյակում, նախօրոք, տարանջատելով ըստ թափոնատեսակի,
- թափոնները պահվում են հատուկ հերմետիկ փակվող տարաներում, սառը և չոր, լավ օդափոխվող տարածքում՝ շրջակա միջավայրը՝ հողային, ջրային ռեսուրսները աղտոտումից պահպանելու նպատակով,
- բացառվում է թափոնների պահումը բաց տարածքում՝ արևի ուղիղ ճառագայթների տակ,
- վտանգավոր արտադրական թափոնները (2-15 կետերում նշված), ինչպես նաև պոլիէթիլենային փաթեթները, խոտանված պլաստիկե և ապակյա շշերը, պիտակները հանձնվում են ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ վտանգավոր թափոնների պահման, հավաքման, տեղափոխման, վերամշակման համապատասխան լիցենզիա ունեցող մասնագիտական ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով (մասնավորապես «Էկոլոգիա Վ.Կ.Հ»ՍՊԸ, «ԱՄ ԷՍԿԱ»ՍՊԸ և այլն),

- Էլեկտրոլիտի թափվելու կամ հնարավոր վթարների դեպքում՝ ախտահանվում և լվանում են անհրաժեշտ քանակության չեզոքացման միջոցներով՝ կիր, սոդա, ջուր,
- թափոնների հետ առնչվող աշխատողները ապահովված են հատուկ պաշտպանիչ արտահագուստով՝ ձեռնոցներ, ակնոցներ, երկարաճիտ կոշիկներ և այլն,
- յուղոտված լաթերը խառնվում 1/10 հարաբերությամբ կենցաղային աղբի հետ և տեղափոխվում է աղբավայր,
- թղթի թափոնները հանձնվում են թղթի վերամշակման ձեռնարկություններին,
- կենցաղային աղբը տեղափոխվում է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:

Արտադրության տեխնոլոգիական ցիկլում օգտագործվում են միայն մաքուր ջրի ֆիլտրեր, որոնք պարբերաբար փոխվում են: Ֆիլտրերի փոփոխման հաճախականությունը կապված է նրանց ստուգման արդյունքներից: Ֆիլտր արտադրողի կողմից տրված ուղեցույցի համաձայն՝ ֆիլտրը շահագործումից հանելուց հետո այն ուտիլիզացվում է որպես սովորական կենցաղային թափոն, քանի որ այն որևէ վնասակար նյութ չի պարունակում:

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր է առաջանան նաև այլ թափոններ՝ մետաղական մասերի տեսքով, կապված տարբեր սարքավորումների փչանայու կամ վերանորոգման հետ: Այն մետաղյա մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման՝ հանձնվում են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին:

11.6 Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒԲ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒԲ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒԲ» սանիտարական նորմերով: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ(A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Արտադրությունում աղմուկի մակարդակի աղբյուր են հանդիսանում հոսքագծերը և օդափոխության համակարգի սարքավորումները: Արտադրամասի տարածքում հիմնականում աղմուկի մակարդակը գտնվում է թույլատրելի նորմերի սահմաններում, ուստի չի կարող ազդեցություն ունենալ արտադրամասի աշխատողների և հարակից տարածքում գտնվող բնակչության վրա:

Իրականացվող վերազինման և ընդլայնման արդյունքում աղմուկի մակարդակի փոփոխություն չի առաջանա:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու և նորմերը պահպանելու նպատակով.

- արտադրությունում աղմուկը չի գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը,
- բացառել սարքավորումների և օդափոխության սարքերի անսարք վիճակում աշխատելը,
- բացառել աշխատատեղերում աղմուկի մակարդակի 80դԲ (A) և ավելի գերազանցումը,
- գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն),
- աղմուկի մակարդակի պարբերաբար չափագրումներ՝ արտադրական տարածքներում,
- երկու տարին մեկ անգամ աղմուկի մակարդակի ստուգում՝ լիցենզավորված ընկերությունների կողմից,
- աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աղմուկի առաջացման սարքն անջատվելու է՝ մինչև անսարքության վերացումը:

11.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Գործունեության և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքները: Ուստի վերջիններիս վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառվում են:

11.8 Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկեր՝ կապված.

- հրդեհների,
- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու ուժեղացում, փոթորիկ),
- կաթսայատան և այլ սարքավորումների շահագործման ժամանակ հնարավոր վթարային իրավիճակների,
- հոսքագծերի անսարքության, տեխնոլոգիական ցիկլի խաթարման,
- աշխատանքի ռեժիմի խաթարման (զագի կամ հոսանքի մատակարարման խափանումներ),
- թափոնների կուտակման, տեղափոխման:

Այդ նպատակով նախատեսվում է.

- քամու, մթնոլորտային տեղումների ժամանակ աշխատանքների վերահսկողությունն ուժեղացվում է, անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքի դադարեցում, բոլոր տեսակի սնուցման աղբյուրների անջատում,
- անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում հետևելու են տեխնոլոգիական գործընթացին, թույլ չտալով սարքավորումների գերբեռնված աշխատանքը,
- գործունեության տարածքում փակցված է արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների, մարդու անվտանգությանն ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- ընկերության տարածքում տեղադրված են 52 հատ փոշով և 40 հատ ածխաթթու գազով կրակմարիչներ, իսկ բենզալցակայանում առկա է շանթարգել,
- ընկերությունն ապահովված է տեսախցիկներով, անվտանգության ապահովման ազդանշանային սարքերով և վահանակներով, ինչպես նաև համապատասխան վերահսկման սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,
- հոսքագծի և այլ սարքավորումների անսարքության ժամանակ անմիջապես անջատվելու են համապատասխան սարքավորումները՝ օդային ավազան վնասակար արտանետումները կանխելու նպատակով:

Ոչ ալկոհոլային ըմպելիքների արտադրության տարածքի լուսավորությունը պետք է համապատասխանի «Արհեստական և բնական լուսավորում» ՀՀ ՇՆ II-8.03-96 պահանջներին:

11.9 Աշխատանքի կազմակերպում, աշխատանքի անվտանգություն

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

- արտադրությունում աշխատանքի անվտանգության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի խախտման,

- արտադրական գործընթացում առաջացող հնարավոր վթարների,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների հետ:

Կոկա-կոլայի արտադրության որակի և աշխատանքի անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է.

- կոկա-կոլա ըմպելիքի արտադրությունը կազմակերպել տվյալ ոլորտում գործող ՀՀ օրենսդրության՝ «Սննդամթերքի անվտանգության մասին», «Թափոնների մասին» ՀՀ օրենքների, կառավարության որոշումների պահանջներին համապատասխան,
- պահպանել արտադրանքի՝ հումքի, որակի, փաթեթավորման, պիտակավորման, մակնշման և ժամկետների, որակական հատկանիշների վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջները,
- ըմպելիքի համար օգտագործվող տարողությունները պետք է պատրաստված լինեն վերջինիս հետ շփման համար նախատեսված նյութերից,
- բացառվելու են կոտրվածք, ճաք ունեցող ապակյա կամ պլաստիկ շշերի օգտագործումը,
- արտադրանքը տեղափոխող տրանսպորտային միջոցները պետք է ապահովեն արտադրանքի որակական հատկությունների պահպանումը, սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը,
- շշացման տարրաները լվացվում և ախտահանվում են կաուստիկ սոդայի 2,5-4,0% լուծույթում՝ 60-65°C և 70-75°C ջերմաստիճանում,
- ապահովել աշխատողների համապատասխան մասնագիտական որակավորումը, փորձը, անհրաժեշտության դեպքում պարբերաբար իրականացնել մասնագիտական դասընթացներ՝ մասնագիտական պատրաստվածությունը ստուգելու, գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և աշխատողների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով,
- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-0 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- աշխատողներն ապահովված են (ցնուղարան, լվացարան, խոհանոց, հանգստի սենյակ) համապատասխան սանիտարական պայմաններով,
- աշխատավայրն ապահովված է առաջին բուժօգնության դեղարկղիկներով՝ աշխատողներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար,
- վտանգավոր թափոնները ժամանակավոր կուտակել հատուկ հատկացված տեղերում, տեսակավորել, ելնելով վերջիններիս որակական հատկանիշներից,
- մինչև թափոնների տեղափոխելը, դրանք պահել փակ սենքերում, բացառելով կողմնակի մարդկանց մուտքը,
- աշխատակիցներին ապահովել գույքով, լվացման, մաքրման և անհատական պաշտպանական միջոցներով (դիմակներ, ռետինե ձեռնոցներ, համապատասխան արտահագուստ, գլխարկ պաշտպանիչ ակնոցներ, կոշիկներ):

11.10 Սոցիալական

Գործունեությունն իրականացվելու է արդեն գոյություն ունեցող արտադրական տարածքում, վերազինման արդյունքում նոր տարածքներ ձեռք չեն բերվելու: Ներկա վիճակում ընկերությունում փաստացի աշխատողների թվաքանակը կազմում է ընդհանուր 326 մարդ, որից վարչական և ծառայողներ՝ 167, տաք արտադրամասում՝ 6, սովորական արտադրամասում՝ 153, լաբորատորիայում՝ 6 աշխատակիցներ:

Գործարանն աշխատում է 24 ժամ 3 հերթափոխով: Առկա է ճաշարան, որը սպասարկում է օրական 210 մարդու:

Արտադրամասի վերազինման արդյունքում նոր աշխատատեղեր չեն ավելացվելու:

11.11 Կանաչապատում

Տարածքի ազատ հատվածները կանաչապատված են՝ 120մ² մակերեսով: Տարածքում առկա է խոտածածկ, դեկորատիվ ծառեր և ծաղիկներ:

Վերազինման արդյունքում կանաչապատ տարածքների փոփոխություն, ինչպես նաև նոր կանաչ տարածքների ավելացում չի նախատեսվում:

Կանաչ տարածքի ոռոգումը կատարվում է խմելու ջրով՝ արտադրության ստերիլությունը պահպանելու նպատակով:

12. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

1. Արտադրական գործընթացի իրականացում՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և ոլորտին առնչվող այլ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ սպառողների անվտանգ և որակյալ սննդամթերքով ապահովման նպատակով:
2. Թողարկվող արտադրանքը պետք է համապատասխանի դրանց որակը և անվտանգությունը սահմանող ստանդարտների, տեխնիկական պայմանների պահանջներին՝ ըմպելիքի որակն ու մարդու առողջությունը պահպանելու նպատակով:
3. Արտադրության, պահպանման, տեղափոխման փուլերում պահպանել արտադրանքի որակական հատկանիշները:
4. Արտադրության ընթացքում օգտագործվող տարողությունները պետք է համապատասխանեն արտադրության համար նախատեսված նյութերի որակներին:
5. Բացառվելու են կոտրվածք, ճաք ունեցող ապակյա կամ պլաստիկ շշերի օգտագործումը:
6. Բաց տարածքներում վտանգավոր թափոնների հայտնաբերվելու դեպքում պետք տեղեկացնել համապատասխան պատասխանատու անձանց՝ թափոնները մեկուսացնելու նպատակով:
7. Աղբամանների ախտահանումը կատարել համապատասխան ախտահանիչ միջոցներով:
8. Թափոնների կառավարումն իրականացնել ՀՀ Առողջապահության նախարարի 29 հոկտեմբերի 2009թ. «ՎՏԱՆԳԱՎՈՐ ԔԻՄԻԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆԸ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅՄԱՅՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՅՊԱՆՋՆԵՐ N 2.1.7.001-09 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 20-Ն հրամանի պահանջներին համապատասխան:
9. Կատարել օդային ավազանի մոնիթորինգ՝ գազի այրման տեխնոլոգիական գործընթացքում ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդների, դիզելային վառելիքի դեպքում նաև ծծմբային անհիդրիդի գերնորմատիվային արտանետումները կանխելու, նորմատիվային քանակները պահպանելու նպատակով:

**12. Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական միջոցառումների / կառավարման պլան/
նախագիծ**

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	Օդային ավազան	<p>Օդային ավազանի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պարբերաբար իրականացնել սարքավորումների հսկման, դրանց հերմետիկության ստուգումներ, - բացառել անսարք վիճակում կաթսաների և սարքավորումների աշխատանքը, - կաթսայատան, ինչպես նաև այլ սարքավորումների անսարքության ժամանակ անջատել սարքավորումները, դադարեցնել կաթսայատան գազի կամ դիզվառելիքի մատակարարումը՝ օդային ավազան վնասակար արտանետումները կանխելու նպատակով, - հոսքագծի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն մասնագիտական պատրաստվածություն ունցող մասնագետների կողմից, - կատարել օդային ավազանի մոնիթորինգ՝ գազի այրման տեխնոլոգիական գործընթացում՝ ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդների, դիզելային վառելիքի դեպքում նաև ծծմբային անհիդրիդի գերնորմատիվային արտանետումները կանխելու, նորմատիվային քանակները պահպանելու նպատակով, 	«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բորթինգ Զամփնի Արմենիա» ՓԲԸ	«Կոկա-Կոլա Յեյլենիկ Բորթինգ Զամփնի Արմենիա» ՓԲԸ

